




Ս.ՎԱՀՈՒՆԻ

ՌԱԶՄԻ  
ՅԵՐԳԵՐ

ՄԵՏՆՈՒՄ

891.99

4-18



2



ՍՈՒՐԵՆ ՎԱՅՈՒՆԻ

8 NOV 2011

891.99

4-18

42

# ՌԱԶՄԻ ՅԵՐԳԵՐ

ՀԱՐԱԻՐ ԲԱՆԱԿԻ XX ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱՌԹԻՎ

MISS FOR 2-

ԼԵՆԻՆ - ՍՏԱԼԻՆ

07.08.2013

56602



4792  
38

## ՂԵԿԱՎԱՐԸ

Կա անեղ մի ժամ. այդ անեղ ժամին  
 Քաղաքն է լուռ, լուռ է քամին:  
 Պատվի յեն առնում պահակները լուռ,  
 Բացվում է դանդաղ յերկաթյա մի դուռ,  
 Յեվ դամբարանից իրեն սզափայլ  
 Ղեկավարն է մեծ յելնում համբարայլ:

Իջնում է դանդաղ նա հրապարակ,  
 Ուղղում է իրեն հագուստն հասարակ.  
 Քայլերը հաստատ քաղաք է ուղղում,  
 Քայլում է յերկար նա մտախուզում,  
 Անցնում է բազում փողոց ու կամուրջ  
 Յեվ շուրջն է նայում մտախոհ ու լուրջ:

Վոչ վօք մշուշում չի տեսնում նրան:—  
Նա մուտք է դործում ամեն գործարան.  
Ստուգում է լուռ ամեն պտուտակ,  
Ամեն մի անիվ, ու լեռնակուտակ  
Մառախուղի մեջ քայլում է յերկար,  
Շոյում ամեն պատ ու ամեն մի քար:

Բարձրանում է նա ամեն մի հիմնարկ՝  
Գործերը նայում, անցնում հարկից հարկ  
Ամեն մի սենյակ, հանրակացարան,  
Ամեն մի դպրոց, ամեն կայարան,  
(Ուր դնացքներն են մշուշում փայլում)  
Նայում է նրանց ու դարձյալ քայլում:

Բացվում են բոլոր դարպասները դոց.  
Մտնում է ազատ ամեն գորանոց  
Ստուգում է լուռ մինչև սուսփոս  
Ամեն հրացան, ամեն թնդանոթ,  
Յեվ, յերբ քաղաքն է նորից արթնանում,  
Ժպտաղեմ ու գոհ նա հետ է դառնում:

Պատվի յեն առնում պահակները լուռ,  
Բացվում է զանդաղ յերկաթյա մի դուռ,  
Ղեկավարն է Մեծ իրեն սզափայլ,  
Լուռ դամբարանը մտնում համրաքայլ.  
Ժամացույցն է հին կրեմլից պարկում—  
Մտնում է զազաղ ու նորից պառկում:

Դառնում են այնժամ անիվներ բազում,  
Բյուր ուղիներով դնացքն է վազում,  
Զորանոցներում, հարկերում, հանքում  
Յեվ ամենուրեք սլայքարն է թնդում,  
Վոր գոհ լինի Նա այն ահեղ ժամին,  
Յերբ շուրջն է լուռ, լուռ է քամին:

## Ձ Ե Ռ Ք Ը

Լեւիցի արձանի մաս

Այնտեղ, ուր Բալթյան ջրերն են յեռում,  
Ուր յերկինքն է մութ խոնարհվել գետին,  
Այնտեղ բազուկը յերկարած հեռուն՝  
Կանգնած է նա իր կուռ զրահապատին:

Կանգնած է հպարտ մարդը բրոնզի բան  
Ու խոսում է գեռ անեղ զնգոցով,  
Ինչ խոսում է նա—խոսմ են նրան  
Հիմա հնազանդ մարդ, յերկինք ու ծով:

Վտաքերի ներքո, ջրերով իր ցուրտ  
Ռազմերդ է յերգում դորշ ծովը արթուն,  
Սմայրոպներն են միշտ հլու ձայնակցում  
Ծոխափին կանգնած միայնակ մարդուն:

Մարդուն,— վոր ստար ամերի հանդեպ,  
Վարոնց ծովն է այս բարկացած լիզում,  
Վտաքի յե հանում բանակներ, դնդեր,  
Վառում փոթորիկ ու բյուր ընդվզում:

Վոր գետնի վրա, ընդերքում խորունկ,  
Ծովերում կապույտ, աշխարհում արաք  
Վարում է հիմա աշխարհաստանն,  
Մրբիկը քանդող և ըստեղծարար:

Նա, վոր բրոնզակերտ ձեռքով պներեր  
Համայն աշխարհին արեն է ցուցում,  
Վոր հոկաեմբերյան մի անեղ գիշեր,  
Ծագեց ու շողաց այս ծովածոցում:

Ու դեմքը հառած ամերին ստար,  
Բազուկ պարզած հորիզոնն ի վեր,  
Իր անեղ ձայնով հպարտ, անդադար,  
Նետում է նա գոռ մարտահրավեր:

Յեւ յերբ յերեւման հորիզոններից  
Ռազմի նավերը մահաբոթ բոցով,  
Բրոնզակերտ ձեռքը կշարժի նորից,  
Ու կփոթորկվեն հող, յերկինք ու ծով:

Կվառվեն այն ժամ յերկու լուսարձակ,  
Յեւ զբահապատը լույսերով դեղին,  
Վրան բրնդածույլ մի հսկա արձան,  
Սհեղաչառաչ կշարժվի տեղից:—

Ու պարզած հեռուն ձեռքը հողմածեծ,  
Հեանվում գնդերին իր ալեխով՝  
Մեզ կառաջնորդե դեկավարը Մեծ,  
Դեպի հաղթանակ ու վերջին կռիվ:

33 թ.

## ԽՈՍՔ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Բարձր են լեռներն Հայաստանի,  
Եւ լեռներում այդ անառիկ  
Քո անունն է թնդում, ինչպես  
գազաթներում յերգող մրրիկ.  
Լայն է մեր դաշտն Արարատյան,  
Բայց նրանից եւ ավելի  
ժողովրդի սի՛րան է միշտ լայն,  
Վոր քեզ համար սիրով է լի:

Հորդ է քո ուժն աշխարհացունց՝  
Ինչպես ջրվեժ մի փրփրադեղ.  
Մեր աշխարհի արևի պես  
միշտ ջերմ ես դու, ամենատես,

Յեզ յերբ մարտում մի կատարից  
մի այլ կատար ենք ծառանում,  
Քե՛զ ենք նայում հավատով լի՛,  
քե՛զ, ուղեցույց պայծառանուն:

Դո՛ւ յես վարում գնդերը մեր  
յերկրի վրա և ընդերքում,  
Ուր չչակներն հազարածայն  
քեզ պողպատե գովք են յերգում:  
Դո՛ւ յես անցնում մեր դաշտերի  
վողջ լայնությամբ ու յերկայնքով,  
Ուր հասկերն են խչում բերրի  
յերջանկության, սիրո յերգով:

Մեր աշխարհի դլխին իջան  
հազար ամպրոպ, հազար կայծակ,  
Բայց ժողովուրդն անվախ քայլեց  
դեպի պայծառ արևածագ.  
Ինկան նրբա վորդիքն ըմբոսս,  
բայց թշնամին մեր բարբարոս  
Մարում եր մեր ճանապարհին  
ազատության ամեն փարոս:

Չե՛ր լինի լույս, թե Մասիսից  
ժայթքեր նորից կրակ ու բոց,  
Չե՛ր լվանա վերքն արյունոտ  
մեր Սեփանա լիճն ալեկոծ,

Յեզ՞ չեր հասնի յերկիրն իմ վորբ  
հեքյաթային իր այս փառքին,  
Թե չկապվեր նա հրաշունչ  
Հոկոեմբերյան չոգեկառքին:

Դո՛ւ յես վարում գնացքն այլ մեծ  
յեզերքներից դեպի յեզերք,  
Դո՛ւ յես տանում մեզ միշտ առաջ,  
մեքենավա՛ր պողպատածեք.  
Դո՛ւ դեմ յեյար յերկրում չողած  
հազարամյա մատախուղին  
Յեզ դուրս բերիր մարդուն դեպի  
յերջանկության անծայր ուղին:

Դո՛ւ յես ապրում մեր սրտերում  
և դճրությամբ արեզական  
Լույս ես տալիս մեր ներկային,  
դժում պայծառ մեր ապագան:  
Դրա համար մեր սերը-քե՛զ,  
և այդ հսկա պատվանդանին  
Հավերժափայլ արևի պես  
չողա՛, չողա, Մե՛ծ Սաալին:

36 թ.

## ՀՐԱՓԵՂՏ ԳՈՐԻՒՆ

Ինչքան ել յես գընամ հեռուն,  
Գնացքն ինչքան ել որորի—  
Դու կմնաս իմ հուշերում,  
Նվիրական, չքնաղ Գորի:

Իմ հուշերում դու կմնաս  
Այսօրվա պես արևանխտ,  
Պարտեզներով քո հեղանաղ,  
Գեռով պղտոր ու անհանդիստ:

Նորից մտքով յես կգիտեմ  
Քո հին բերդից սրածանիք.  
Կտարածվեն նորից իմ դեմ  
Ամեն փողոց, ամեն տանիք:

Յես կտեսնեմ հեռու մի տուն  
Իր պատերով խարխուլ ու հին.  
Այնտեղ մի որ փոքրիկ վորդուհի  
Որոր յերգեց վրացուհին:

Ահա ներսում—մաշված գորգեր,  
Մի հին սեղան ու յերկու բարձ,  
Ահա դեղին մի ինքնայեռ—  
Առաջվա պես մաքուր սրբած:

Այստե՛ղ ժպտաց մանուկն ըմբոստ:  
Կոչկահարի աղքատ վորդին,  
Վոր բարձրացավ վորոտընդոստ—  
Արև բերեց ժողովրդին:

Այս հնամյա տանը ծագեց  
Արևն անմար, ըմբոստ Սոսոն,  
Վոր շողշողաց հզոր ու մեծ  
Հորիզոնից մինչ հորիզոն:

Վոր մեզ ժպտում է կրեմլից,  
Վորպես ընկեր և վորպես հայր...  
Թանդ ևս անչափ և սիրելի,  
Առաջնորդի՛ ծննդավայր:



Թանգ Ե ամեն փողոց ու տուն,  
Արևդ ջերմ ու հուրհրան,  
Յեվ մանուկները քո ժպտուն,  
Վոր հիշեցնում են միշտ նրան...

Ու ինչքան ել զնամ հեռուն,  
Գնացքն ինչքան ել որորի—  
Դու կմնաս իմ հուշերում,  
Նվիրական, չքնա՛ղ Գորի!

37 Թ.

ՌԱԶՄԻ ՅԵՐԳԵՐ

## ՀԱՂԹԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Ձարկե՛ք ուժգին, թմրկահարներ, զարկե՛ք արագ,  
Յե՛վ թնդացեք, դուք շեփորներ վորոտաձայն.  
Այսօր նորից իջնում ենք մենք հրապարակ—  
Ռազմի յերգով, դրոշներով հողմածածան:

Գալիս ենք մենք գործարանից, հանքի խորքից,  
Համայնական մեր դաշտերից արե՛վազարդ.  
Գալիս ենք մենք—Հոկտեմբերին հասակակից,  
Նրա նման հզոր և միշտ յերիտասարդ:

Վորպես նվեր բերում ենք մենք հայրենիքին  
Գեղեցիություն, ուժ և մարմին արե՛վակեց.  
Գոչում ենք մենք—վողջուն անմար արե՛գակին,  
Վոր Կըրեմլի ամրոցի մոտ ժպտում է մեզ:

Նրա կամքով մենք հաղթեցինք հող ու տարերք,  
Հաղթող յեղանք դեանի վերա, ծովում՝ ողում -  
Ղեկավարն է մեզ միշտ վարում սողալատաձեռք  
Ու կատարից դեպի կատար առաջնորդում:

Ու թե հանկարծ մեր աշխարհին դա մի վտանգ,  
Նրա կամքով մենք կթողնենք դազգահ ու սուն,  
Դադդահի տեղ մենք կվարենք նավեր ու տանկ—  
Յեվ կնետվենք դեպի մրրիկը մահաթույն:

Մենք կհաղենք Ստալինյան յերկաթ թիվեր,  
Մենք կխոսենք թնդանոթի դղրդոցով,  
Մենք կսուրանք միշտ բեվեռից դեպի բեվեռ—  
Յեվ կղողան մեր ներքեվում ցամաք ու ծով:

Զի սասանի հայրենիքին վոչ մի մրրիկ,  
Նա կմնա ամբողջի պես կուռ ու ասեղ,  
Ու յերբ հաղթած դառնանք ամբողջ անառիկ,  
Մեզ կժպտա ամբողջապետը հանճարեղ:

Զարկե՛ք ուժգին, թմրկահարներ, դարկե՛ք արաբ,  
Յեվ թնդացե՛ք, դուք շեխորներ փորտաձայն.  
Այսոր նորից իջնում ենք մենք հրապարակ—  
Ռազմի յերդով, դրբոշներով հողմածածան:

37 թ.

### ՀԻՆ ԶԻՆՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ

Քո Հին զինվորից վողջույն, կոմիտա՛ր.  
Արդեն լրացավ տասներկու տարին,  
Բաժանում են մեզ այնքա՛ն դեռ ու սար,  
Բայց չեմ մոռացել իմ կոմիտարին:

Ու հաճախ, յերբ յես մեքենայի մոտ  
Նայում եմ դործվող ձերմակ կտավին—  
Տեսնում եմ իմ դեմ դաշտերը ձյունոտ,  
Ուր մենք կովեցինք քսանևեկ թվին:

Քսանևե՛կ թվին... Զյունապատ, անձիր,  
Դաշտերն եմ, ահա՛, իմ առջև դիտում —  
Փոսի մեջ դրած մի հատ դնդացիր՝  
Կանգնած եմ նորից Նորազավիթում,

Խաղարն է իջնում ձյան հետ միասին,  
Ու պառկում եմ յես իմ նեղլիկ փոսում:  
Սնծայր տափարակ, վո՛չ աստղ, վո՛չ լուսին,  
Գնաբեր քամի, ծանր ըսպասում:

Յե՛վ, ասես գետնից, թռչում և հանկարծ  
Թշնամին հեծյալ ու դոփում արագ:  
Խուճապ ու նահանջ: Յես փոսում պառկած  
Իմ գնդացիներից բացում եմ կրակ:

Ճարձատում է նա: Պարզ լսում եմ յես  
Չորս սմբակների դոփյունը վերջին.  
Փախչում են նրանք, իսկ մերոնք անտես  
Հասել են արդեն դյուղի կամրջին:

Գնդացիքն առած և անհավասար  
Մարտ տալով բջին սողում եմ մինչ ծեղ.—  
Ա՛խ, այդ գեղերը, ընկեր կոմիսա՛ր,  
Ուղեղիս միջից չի ջնջվի յերբեք:

Այդ որից յերկար ամիսներ անցան,  
Մենք մարտեր տեսանք ավելի դաժան.  
Յես բերի ինձ հետ մի հին հրացան  
Յե՛վ կրծքիս՝ կարմիր մի շքանշան:

Յես զենքս թողի. բայց միևնույն սիրով  
Իմ գործվածքային դաղդահն եմ վարում.  
Յանկանում եմ յես լինել լավ զինվոր՝  
Թեև այլ զենքով, այս նոր պայքարում:

Բայց յերբ պետք լինեմ, հետ կգամ նորից.  
Յես չեմ մոռացել զնդացիքն անդին:  
Վողջույն կոմիսա՛ր, քո հին զինվորից,  
Վոր պատրաստ է քո նոր հրահանգին:

35 թ.

## ԿՈՒՎԻՆՆԵՐԳԻ

Թճնդուժ ե արգենն փողը պղղընձի,  
Ո՛, դոփի՛ր, դոփի՛ր սեւարաչ իմ ձի:

Թճոխը, վորպես շանթ սըլացքով անահ,  
Նորից դեպի մարտ, նորից դեպի մահ:

Թող կայծեր ցայտեն քո սմբակներից  
Թող շանթեր տեղան մեզ վըրա վերից:

Թող վրադ բացեն հաղար խոց ու վերք,  
Թող քամին սուլի միշտ մահվան քայլերդ:

Թող մեր դեմ գոռան գետերը յեռուն,  
Դոփի՛ր, ի՛մ նժույզ, ու թոխի՛ր հեռուն:

Յերբ մեր հողերից քչենք թշնամուն,  
Նորից խնդությամբ կդառնանք մենք տուն:

Իսկ յեթե ընկնեմ գնդակով դաժան,  
Դարձյալ դո՛ւ յեղիք ընկեր անբաժան:

Ու համբուրելով թաց աչքերը քո,  
Թող մեռնեմ կարմիր դրոշի ներքո:

Թճնդուժ ե արգենն փողը պղղնձի,  
Ո՛, դոփի՛ր, դոփի՛ր, սեւարաչ իմ ձի:  
34 թ.

## ՋԱՐԿ ԹՄԲՈՒԿ

Չա՛րկ թմբուկ, զա՛րկ, թմբուկ,  
Ու զնդերն արթնացուր:  
— Ո՞վ է այն ձի թամբում  
Ու ճոճում արնոտ սուր:

Ո՞վ է այն ուժ խմբում  
Ու զինվում այս ժամին...  
Չա՛րկ թմբուկ, զա՛րկ թմբուկ,  
Գանի կա թշնամին:

Հե՛յ, պատրաստ ամենուր  
Հայրենիք մեր անծիր  
Հե՛յ, պատրաստ դիրքերում—  
Թնդանոթ, զնդացիր:

Չենք ուզում պատերազմ  
Յեվ կամ հողը ոտար.  
Չենք ել տա մենք նրանց  
Մեր յերկրից վոչ մի քար:

Ո՞վ է այն ձի թամբում  
Ու ճոճում արնոտ սուր:  
— Չարկ թմբուկ, զար՛կ թմբուկ,  
Ու զնդերն արթնացուր:

**ԺՈՎԱՓՆՅԱ ՅԵՐԳ**

Մեր անծայր ծովափին  
Միչտ արթուն, իմ ընկե-  
Տե՛ս, պարզվում են կրկին  
Արյունոտ, չար ձեռքեր:

Տես՛, դառնում ե այս կողմ  
Ռազմանավր մուժում,  
Յեվ վաղուց մի չար հողմ  
Պատերազմ ե գուժում:

Մեր յերկրին են նայում  
Սև փողերը պատրաստ,  
Բարձրացրել են խարխախ  
Ու պարզել առաջաստ:

Վորոտում ե ջամին  
Ովկկանոսն ե դողում.  
Ո՞վ ե այն այս ժամին  
Դեպի ամբ լողում:

Ո՞վ ե այն, վոր մուժում  
Տես, դալիս ե մեր դեմ.  
— Հե՛յ, ընկեր ի՛մ, արթո՛ւն,  
Փոթորիկ ե արդեն:

33 Թ.

## ԹՆԴԱՆՈՒՆԵՐԸ

1.

Թնդանոթները զորչ—կոկորդներով յերկաթ  
Պալատների համար ղղրղացին յերկար:

Դղրղացին նրանք ու թափեցին կրակ՝  
Ստեպներում անծայր, քաղաքների վրա:

Դղրղացին նրանք ու թողեցին վրած՝  
Քարակույտեր մռայլ, ու քաղաքներ մեռած:

Խաչախայտեր թողին, ղիակույտեր ու ցին,  
Մի հաշմանդամ յերկիր—թնդանոթի կոցին:

Քաղաքներից ել ծուխ չբարձրացալ յերբեք,  
Մեր արտերը հնձեց մահատարած մի ձեռք:

Իսկ յերբ մերոնք յելան ուռժք, թնդանոթ՝ առած,  
Դղրղացին նրանք՝ պալատներին դառած:

Ու յերգեցին նրանք Հոկտեմբերյան հրով—  
Խրճիթներին—հանդիստ, պալատներին—գրո՛հ:

2.

Ստեպներում անծայր, քաղաքներում արնած  
Դու բարձրացար, յերկիր, մոխիրներից հառնած:

Որորվեցին հասկեր քո արտերի մեջում,  
Ու շըչակներ հազար վորտացին վողջույն:

Դու բարձրացար արադ, վորպես բուռնցք և մահ՝  
Մեր թշնամու կանդուն պալատների համար:

Գեռ կկանգնեն նրանք պարիսպներիդ ներքո,  
Բայց պատրաստ են յերկիր, թնդանոթները քո:

Մենք չենք ուզում վոչ հող, վոչ ել արյան կաթիլ,  
Բայց չենք զիջի յերբեք մեր հողերից մի թիվ:

Ու յերբ յելեն մեր դեմ, կբարձրանան այն ժամ  
Թնդանոթներ անթիվ կոկորդներով դաժան,

Ու կերզեն նորից Հոկտեմբերյան հրով,  
Խրճիթներին—հանդիստ, պալատներին—գրո՛հ:

## ԴԵՌ ԿԳԱ...

Դեռ կգա մի օր, յերբ ծովերը մեր  
Պիտի զրնգան ազգմանավերով,  
Դեռ մեր դեմ կգան թշնամու կայմեր  
Յեւ թնդանոթներ դաժան փողերով:

Բյուր ողանավեր անկեզ, ոմբածիզ  
Պիտի տարածեն ամպերը զազի,  
Յեւ տանկը, ինչպես՝ յերկաթե մի ձի,  
Դաշտերում պիտի դուրի ու վազի...

Ահեղ կլինի այդ մարտը վերջին,—  
Դատակարգերի բաղխումը հսկա,—  
Յեւ վողջ աշխարհը պիտի զողանջի,  
Յերբ մեր բանակի դուրյունը զգա:

33 թ.

## ՅԵՐԳ ՓԵԼԻՔՍ ԶԵՐԺԻՆՍԿՈՒ ՄԱՍԻՆ

Անմեռ կմնա բյուր լեզենդներում  
Հեղափոխության ասպետը արի:—  
Նա մեր թշնամուն յերբեք չէր ներու՛մ,  
Բայց ջերմ էր մեզ հետ, անսահման բարի:

Գիտեր նա սիրել ծաղիկներ ու յերգ,  
Նա մանուկներին հաճախ էր հիշում,  
Նա զիտեր խնդալ և զիտեր գրել  
Թշնամու համար մահվան վորոշում:

Նա խորն եր սիրում աշխարհն ու մարդուն,  
Գործը մեր արդար, հայրենիքը մեծ.  
Հենց դրա համար՝ զգաստ ու արթուն,  
Իր սուրն անողոք նա՝ վայր չդրեց:

Ողջ ատելությամբ ջախջախում եր նա  
Հազար գլխանի թունավոր ոճին,  
Ձեր թողնում յերբեք, վոր նա փաթաթվի.  
Մեր հայրենիքի ահեհ ամբողջին:

Յեզ հիմա անպարտ մեր հայրենիքում  
Մենք շենք մոռանում անմեռ Ֆելիքսին,  
Շնչում է նա մեր սրտում և յերզում,  
Յեզ անսիրջ կերպեն դեռ նրա մասին:

Միշտ կերպեն և քեզ, Ֆելիքսի՛ բանակ,  
Յեզ քո յերկաթե նոր գորավարին,  
Վոր աանում է քեզ դեպի հաղթանակ:  
Չ կիքսի թողած սուրը միշտ ձեռին:

33 թ.

## ԸՄՐՈՍՏ ՆԱՎԱՍԻՆ

Տխուր է խփվում արնոտ Սեզ ծովը  
Իր քարոտ ափին ու չար քրքջում...  
Ընկալ Ողեսան: Բայց նորից ո՞վ է  
Ռազմանավերը դեպի ափ շրջում:

Նայում են դաժան թնդանոթները  
Նավաստիների գլխավերելում,  
Ու կայմի վրա—բոլորից վերը  
Մի նավաստի յե ահա յերեվում:

Ծածանում է նա կարմիր դրոշը  
Յեզ Ֆրանսահանը կայմից վայր բերում,  
Ու նավի վրա թնդում է մարշը,  
Վոր լոեց յերեկ բարեկազներում:

Կանգնել ե չվար ծեր նալապետը,  
Սպաները լուռ նայում են դետին,  
Վողջ նալը ըմբոստ նալաստու հետ ե,  
Յեվ նա՛ յե խոսում, նա—Անդրե Մարտին:

— Ընկեր զինվորներ ու նալաստինե՛ր,  
Մենք կրակեցինք, բայց ո՞ւմ դեմ արդյոք,  
Ո՞ւմ դիրքերն են այն արյունով պատած,  
Ո՞վ ե կրակում այնուեզ ծնկաչոք:

Ձուր եք, սպանե՛ր, մեզ նորից խարում,  
Մերոնց դեմ նորից չենք բացի կրակ,  
Թչնամի չկա մեր դեմ ծովափում,  
Այլ նալաստիներ մեզ պես հասարակ—

Ու բանվոր աղերք, վոր իրենց հացի,  
Լալ որվա համար արյուն են թափում,  
Վորից բոլորս ել, ձեզանից բացի,  
Ձուրկ ենք նրանց պես հայրենի ափում:

Դուք մեզ բերեցիք Պրանսական ափից,  
Վոր մենք սպանենք մեր յեղբայրներին,  
Վոր թնդանոթի ձայնի սարսափից  
Հեղափոխության մրրիկը լռի:

Բայց սխալվեցիք... Ահա արյունոտ  
Նրանց գրոչը մենք ել ենք պարզում,  
Հեռ ենք դարձրնում զենք ու թնդանոթ,  
Վոր վաղը նրանք թնդան փարիզում:

\*\*\*

Անհուն խնդությամբ այսոր Սեվ ծովը  
Իր գրանիտե ափերն ե քերում,  
Բայց հեռաստանում նորից այն ո՞վ ե,  
Ո՞ւմ սաղմանափն ե հեռվում դեղերում:

Ո՛, կզան նրանք—նրանց նալերը,  
Բյուր թնդանոթներ կապթեն վերստին,  
Բայց այն ժամանակ բոլորից վերը  
Կհայտնվի նորից ըմբոստ նալաստին—

Ու կապանձվի ահեղ վորտար,  
Յերբ նա ծածանի գրոչն արնագույն.  
Այդ որը այնքա՛ն, ո՛, այնքան մոտ ե,  
Յեվ այդ մասին ե Սե ծովը յերզում:

33 թ.

## ՆՈՅՆՄԻՆԵՐՅԱՆ ՔԱՄԻՆ

Ի՞նչ է յերգում քամին, նոյեմբերյան քամին,  
Հովիտներում արձակ ու լեռներում այս մերկ,  
Քե՛զ է յերգում, յերկի՛ր, նոյեմբերյան քամին,  
Ու վորոտում վորպես անլույի ռազմերգ:

Քե՛զ է յերգում քամին, վորը սրբեց դարեր  
Քն դաշտերը անհասկ ու արոտներն ամա,  
Վոր դյուզերով անցավ, քաղաքներով ավեր,  
Յեվ ամենուր տեսավ դատարկություն ու մահ:

Աղիւղորձ վողբով նա դուրդուրեց քո դին,  
Հազարամյա մեր մա՛յր, ո՛ր, դու յերկիր անող,  
Ու լեռներում քո ցուրտ, անտառներում մթին  
Նա դղրդաց վորպես դարհուրելի բողբ:

Յեվ յերբ իջան անգութ խարազաններ քո ճորտ  
Վորդիների մեջքին, ո՞վ էր արդյոք, այն ո՞վ,  
Վոր ցնցելով մինչ ծեղ հողե պատեր ու ոճորք,  
Տխուր սգաց անհայ մանուկների ձայնով:

Նա՛ յեր սգում—քամին, նա՛ յեր ճոճում մինչ լյուս  
Տխրադողանջ զանդեր դժբեթներում քո հին,  
Բայց չէր դալիս այցի վո՛չ մի, վո՛չ մի հիսուս,  
Ու քեզ թողին մենակ հողեվարքիդ պահին:

Չհիշեցին, վոր դու այս լեռների դրկում  
Սչքդ ես փակում հավերժ, վոր բազուկներ անգութ  
Քն հանճարի վարթամ այն կաղնին են պոկում,  
Վոր արտմորեն խշշաց հորիզոնում քո ցուրտ:

Գեղ պատեցին հետո մի յեռագույն լաթով,  
Յեվ քեզ վրա, մեր մա՛յր,—արյունաքամ դի՛ակ,  
Թպրտոցով անուժ յերգեց, յերգեց անթով  
Մեր ցուրտ քամին, վորպես հուզարկավոր միակ:

Կտուրներին նստող թո չնէրի նման,  
Գունատ լուսնի դիմաց նա վնդռտաց կերկեր,  
Յեւ մտնելով թափուր գետնափորեր ու բակ,  
Խուլ հեծեծաց թաղման սրակեղև յերգեր:

Նա կըսդար—ե դեռ թո դադաղին անփայլ  
Կլարնէյին մեխեր արնոտ հազար տապար,—  
Չծածաներ յեթե քամին դրոշ մի ալլ,  
Վոր քեզ վրա պիտի հալերժութեն ծփար:

Նա կըսդար,—յեթե մի յերկաթե բազուկ,  
Վոր հյուսիսում շողաց դղյակներին ընդդեմ,  
Գո դաշտերում խոպան ու լեռներում բազում  
Գուրս չհաներ կովի ահադգորդ գնդեր:

Ու թնդանոթների վորտաներին խառնած  
Վողջույնն իր հպարտ, յերգեց քամին, թե կա՛ս,  
Թէ դու վտառի յեյար թո դադաղից հառնած,  
Ո՛ր, արնավերք մեր մայր,—մարմնափորված յերազ:

Ու դիրքերով անցավ, ավլեց արշուն և ձյուն  
Նոյեմբերյան քամին զղրղոցով իր թավ,  
Յեւ միացած հաղթող բանակներին ցնծուն,  
Մի ստափոտ պայծառ՝ գյուղ ու քաղաք մտավ:

Մուխը ցրեց հազար ծխաններից յեկող,  
Մեկոծեց արտեր ու ջրանցքներ հորդուն,  
Յեւ քեզ յերգեց անախ, համայնակա՛ն մեր հող,  
Ու քեզ վրա հալեա յերջանկացած մարդուն:

Յերգեց նրանց, վորոնք արխարար լծված  
Մութ դարերից յեկող թո լուսանիլ կառքին,  
Տանում են քեզ, ահա՛, ուղիներով պայծառ  
Դեպի կաղույտ, կապո՛ւյտ հեռանխտներ փառքի:

Յերգեց՛, յերգեց յերկար. ու այս գիշեր կրկին  
Յեւ լսում եմ նրան մեր լեռներում ազատ,  
Յեւ միացած նրա աշխարհահացունց յերգին,  
Սերս եմ հղում յես քեզ ու վողջույններ հազար:

Սպրի՛ր, մեր մայր, սպրի՛ր, յերջանկարեր մեր հո՛ղ  
Յեւ թող ամեն գիշեր, այս ցնծության պահին  
Բանակներին անխոնջ, սերունդներին յեկող  
Ղուկ թո մասին պատմի նոյեմբերյան քամին:

## ՍԽԱԼԸ

ՌԵՄՍԻՆԻ «Արեվմտյան  
Ֆրոնտում անփոփոխ է»  
գիրքը կարդալուց հետո,

Քայլում է մարդը գլխիկոր ու լուս,  
Քայլում է մարդը արնոտ կոշմարում...  
Վորտե՞ղ է մահը, ո՞վ է նշմարում,  
Յե՛վ չկա՞ արդյոք փրկության մի դուռ:

Վո՞ր փշալարն է, վոր՝ պիտի փրկի  
Գորշ բանակները մահվան արշավից.  
Արդեն մեռնում է, փրկեցե՛ք մարդիկ,  
Հաշմանդամ հողը խելագար ցավից:

Քայլում է մարդը, անուժ, հողնարեկ,  
Հեաքից թողնում է մոխրակույտ ու քար,  
Ուղեղում, դրսում՝ արնամուժ ու մեղ  
Յե՛վ մեռնողների ճիչը խելագար:

— Չու՛ր եք սպասում հեռվում մայր ու քույր,  
Մեռնում է մարդը արնոտ մշուշում,  
Մեռնում է մարդը անըզգա և կույր,  
Վոր միայն արյունն և մահ է հիշում:

Չու՛ր եք սպասում, յերեխա և կին,  
Չու՛ր եք սպասում, մեքենա և արա,  
Այստեղ քայլում է անըզգա մի մարդ,  
Վոր ել չի կարող ձեզ սիրել կրկին:

Նա թագավոր է... որերի միջով,  
Կերակրի թասը իր դանդին դրած,  
Արշավում է մերկ, ու չար քրքիջով  
Թնդանոթներն են մողջունում նրան:

Քայլում է մարդը բյուրանուն, բյուրսիրտ  
Վորը ե՛վ Վոլֆ է, և՛ Ալբերտ, և՛ Կատ...  
Իր դադաղն ուսին, խելագար և բերտ,—  
Ինքն իր վերայով դուրսում և վհատ...

14 թվին եր: Չորս լիվ տարի,  
Նա դովեց, դովեց ամբողջ Փրոնտով:  
Միայն չորս տարի: Յեվ քարը քարին  
Չըմնաց այնտեղ: Իսկ հետո, հետո՞:

«Վերջ պատերազմին»,—վորոտաց հետո,  
Ընչազուրկ մարդը ձյունոտ հյուսիսում,  
Ու թնդանոթները դարձան զայրույթով,  
Դեպի խաբերա հայրենիքը սուտ:

Հայրենի յերկրի պալատների դեմ,  
Գրոհեց մարդը և հետո հպարտ,  
Վորպես այդ յերկրի խնդուլթյուն ու տեր,  
Նա քայլեց դեպի մեքենա և արտ:

Այդ «վիզրիկ» դեպքն է մոռացել, ախ՛ր,  
Երբև Ռեմարկը իր արնոտ զրքում,  
Իայց վաղը, վա՛ղը, յերբ նորից դողան  
Թնդանոթները,— այդ չեն մոռանա,  
Կատերն ու Վոլֆերը և՛ Արեվմուտքում:

34 թ.

## Խ Ո Ն

«Կրոնիզելի»—ում կար մի լավ պատկեր.—  
Կոմիսար Կլիմ Վորոչելովի  
Ուսին խիեղով վորպես հին ընկեր,  
Իր բանվորական հազուստը հազին  
Նույն Կլիմն է մեր՝ հարցնում խնդադին.  
— Հիշո՞ւմ ես արդյոք, վոնց ելինք բանում,  
Ընկեր կոմիսա՛ր, մի որ Լուզանում:  
Ու մտերմաբար ժպտում են նրանք:  
— Իսկ դու հիշում ես,—զինկոմն է ասում,—  
Թե ինչպես մեկ տեղ Պերեկոպն առանք:

Պոե՛տ, թե կուզես դրավել դու ել  
Բանաստեղծության Պերեկոպը մեծ  
Ու վորպես պոետ—հրամանատար  
Մի որ հաղթական ժպիտով նայել  
Յերգիդ բարձունքից քո յերդին ու քեզ,—  
Վորպես սեազորձ տնքա անդադար  
Գո յերդի վրա ու բանիր, ինչպես  
Պարզ ու հասարակ Կլիմն եր բանում  
Մի որ Լուզանում:

34 թ.

## ԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՆԻՆ

Միացյալ Նահանգների Սկարբորո  
քաղաքի դատարանը ելեկտրական  
աքտի դատասպարտեց յոթ նեգրե-  
րից մեկին (քերթերից) :

Պատվանդանիդ ծովն և խփում միշտ գաղազած ,  
Հողմն և դարնվում պղնձաձույլ քո պսակին ,  
Հողմերի դեմ քո ջահակիր ձեռքը պարզած  
կանգնած ես դու , ազատություն անվանված կի'ն :

Բեզ կանգնեցին մարդիկ մի որ այդ ծովափում ,  
Վոր դու ժպտաս անմեղությամբ վոճրի պահին .  
— Ո՛ր , պղնձադեմ ծախված պոռնիկ , ո՞ւմն ես խարում  
իւ մինչև յե՞րբ պիտի խարես դու աշխարհին :

Բեզ կոչեցին ազատություն , վոր հալածված  
Ազատությունը բարձրացնեն մահաթուին ,  
Վոր դու ծածկես քո իրանով՝ արյամբ լցված—  
Վի՞ն անհատակ ու բարձունքից նայես լուին :

Վոր դու ծածկես քո փեշերով հնատարազ  
Չնդաններում մեռած մարդկանց դիեր բազում ,  
Վոր դու խեղդես հաղարների ճիչն յերկնահաս ,  
Ու թաղցնես ամեն բողոք ու ընդվզում :

Սնոթեկան ու անարդված այդ բանակին ,  
Յեթե կարող ես , բարձրացրու մահվան աթոռ ,  
Յեթե կարող ես դիր դադադ , կեղծավոր կին ,  
Մի վողջ յերկիր , մի դասակարգ ահեղադու :

Կբարձրանան նրանք մի որ ուսմբեր առած ,  
Կխորտակվի ամեն ամրոց , ամեն զնդան ,  
Ջոհերդ բյուր դադաղներից կեղնեն հառնած  
Ու չի վրկի քեզ վոչ մի դահ ու պատվանդան :

Մրդյոք ինչպե՞ս պիտի ծածկես հանցանքը քո ,  
Յերբ քեզ նային զնդերը մեր վորոտաձայն . . .  
Ո՛ր , ծածկիր դեմքդ կեղծավոր արնոտ ձեռքով ,  
Ծածկիր ամոթը աշխարհիդ , պղնձե արձա'ն :

ԲԱԼԼԱԳՆԵՐ

---

**ԲԱՎԼԱԿԱՆՔԱՐՏԻՋԱՆԻ, ՆՐԱ ԿՆՈՋ  
ՅԵՎ ՉԻՈՒ ՄԱՍԻՆ**

Վորպես ընկերներ յեզան մտերիմ,  
Վորպես ընկերներ միմյանց սիրեցին  
Պարտիզանն ու ձին:

Իր ձիուց բացի, աշխարհի վրա  
Նա ուներ մի կին՝ աչքերով իր ջինջ  
Յեվ ուրիշ վոչինչ:

Մի մութ իրիկուն համբուրեց նրան  
Ու, յերբ վոր ծագեց լուսինը լրիվ,  
Նա գնաց կռիվ:

Նա գնաց կռիվ, չդարձավ ել տուն,  
Յեվ Դոնի ափին մնացին մենակ  
Մի կին, մի անակ:

Եւ յետ չգարձավ, ու կովի դաշտում  
Գիշեր ու ցերեկ անքուն կովեցին  
Պարտիզանն ու ձին:

Նորից ծանրասահ ամպերի տակից  
Լուսինը լրիվ դանդաղ բարձրացավ  
Ու տարին անցավ:

Յեւ մի մուկ գիշեր վայտե տնակի  
Դոնակը դռից վտանքով իր գույգ  
Մի ծանոթ նժույգ:

Դոնակը բացեց կինն ուրախացած...  
Ձին եր միայնակ վրջնում շեմքում  
Ու հոգնած անքում:

Ձին լիզեց նրա ձեռքերը ու, թաց  
Աչքերում պահած արտասուք ու ցավ,  
Լուին կոացավ:

Կինը վշտագեմ բարձրացավ թամբին  
Մի ակնթարթում թռավ հերարձակ,  
Դաշտերով արձակ:

Ու կանգնեց հանկարծ: Լուսնկա ճամբին  
Վիրավոր ընկած մի մարդ եր շնչում  
Ու նրան կանչում:

Նա թեքվեց նրա արնոտ դիակին,  
Ու նայեց նրան ժպիտով ճանանչ,  
Պարտիզանը քաջ:

— Ընկա յես, սաաց, — քաջարար, իմ կին,  
Թեև շատերին արի յես տակով  
Իմ թեթ դնդակով...

Մեռնում եմ... բայց կա դեռ ահեղ մի մարտ...  
Առ սուրս արնոտ, ա՛ռ հրացանն իմ,  
Ձին հալատարիմ—

Ու թուր այնտեղ: Կովիք դու հպարտ  
Ու մեռիր կարմիր դրոշի տակին,  
Պարտիզանի՛ կին:

Ասում են, շուտով Դոնում հայտնվեց,  
Տղամարդու գորշ գլխատներ հազին,  
Պարտիզան մի կին:

Կովեց քաջարար, ուժ ու շունչ տիկեց  
Իր ներկայութեամբ գնդերին ցրիվ

Ու մղեց կռիվ:

Բայց յերբ ծաղում եր լուսինը լրիվ,  
Տխրում եր հանկարծ, շրջում առանձին.

Տխրում եր և՛ ձին:

Հետո արձակած մազերը խռիվ,  
Թռչում եր, ինչպես կատաղած քամին,  
Դեպի թշնամին:

Նրա հետեւից պարտիզանական  
Մումբն եր սլանում անլախ աներկյուղ—  
Քաղաքներ ու դյուղ:

Մտում են, Դոնում նա կովեց յերկար...  
Որեցոր նրա անունն եր փռվում:  
Ու այտեղ՝ կռվում,

Վորպես ընկերներ յեղան վշտակից,  
Վորպես ընկերներ իրար սիրեցին  
Պարտիզանն ու ձին:

33 թ.

## ԲԱՎԼԱԴ ՏԱՆ ՄԱՍԻՆ

Ծովի յեզերքին, անթափանց միզում,  
Պահակն Ե քայլում ու հանգիստ յերզում.—

— Հեռու մի հովտում, դետի մեջ վճիտ,  
Տուրում եր խաղաղ մի փայտե խրճիթ:

Դեմը բարդու ծառ, վրան՝ ահազին  
Հարդե բնի մեջ մի ծեր արագիլ:

Բարդու պես արագ յես առա հասակ,  
Այդ տան մեջ դարձա առնասիրտ կազակ:

Թուխ դեմք ունեյի, ահուելի ուսեր,  
Տակս՝ սև նժուլդ ու կողքիս սուսեր:

Ժպտում եյին ինձ թե աղջիկ, թե կին,  
Բայց յես ընտրեցի նրանցից մեկին:

Ընտրեցի մեկին ու մի լուսնկա  
Մեր բարդին յեղավ մեր սիրո վկան:

Թնում շարժվեց արագիլը լուռ,  
Վերեց վայր ընկավ մի ճերմակ փետուր:

Դիր ծոցդ,—ասավ,—ու տխուր ժամին  
Նայիր ու հիշիր ինձ—քո թխածամին:

Սերս կարճ յեղավ... Այն ահեղ տարին  
Միշտ ամպ էր չոգած դեմի անտառին:

Մի խավար գիշեր, յերբ գոռաց նա խուլ,  
Թողի յես նրան ու տուներ խարխուլ:

Իմ մոր հետ մեկտեղ յեջկինքն ել լացեց,  
Թեքվեց իմ թրջված բարդին հողմածեծ:

Աղջիկն իմ սիրած ծածկեց դեմքը թաց,  
Ու սոկվեց տեղից իմ ձին սրբնթաց:

Անցավ դեռը հորդ ու սուրաց վերեւ—  
Դեպի անտառը ասեղնատերեւ:

Այնտեղ ինձ յերկու ընկեր միացան՝  
Ինձ պես վերցրած թուր ու հրացան:

Ու յերեք գիշեր թուանք յերեքով  
Դեպի կովի դաշտ, դեպի Պերեկոպ:

Կովեցինք մութով, կովեցինք լուսով,  
Այնտեղ մենք տեսանք շատ զրկանք ու սով:

Շատ արյուն տեսանք՝ դետի պես հոսող,  
Վերեց՝ հորդ անձրեւ, խիլ դեմից՝ վոստին:

Կայծակն էր զարկում ու հողմը յերգում,  
Յերբ ընկան իմ քաջ ընկերներն յերկու:

Նրանց փոխարեն ասես թե խաղով,  
Ութ մարդի արի յես սրախողխող:

Յերբ վրա հասա իններորդ մարդուն՝  
Քամբին իմ քունքից արյուն եր հորդում:

Աչքերս մթնեց, ու յերբ բացվեցին,  
Հասել եր մերոնց հողմաթեղ իմ ձին:

Նրա պես որերն ել սուրացին արագ,  
Ու մենք ցնծալով Պերեկոպն առանք:

Իմ վերքը վախվեց, ու յերբ վոր նորից  
Ամպը վորոտաց, հիշեցի վոր ինձ—

Հեռու մի հովտում, գետի մոտ վճիա  
Սպասում ե լուռ մի փայտե խրճիթ:

Յես հրաժեշտ տվի գնդին, զինկոմին,  
Անբաժան իմ ձին հանեցի գոմից:

Յերբ ասպանդակին վոտք դրի, ուրախ՝  
Որինչաց, թափով դեպի տուն սուրաց:

Գեմ տալով քամուն բաշը ծածանող,  
Քռավ յերեք որ ծանոթ կածանով:

Պւ յերրորդ որը արեը, ա՛խ զուր,  
Ներկեց մեր գյուղի բարդինները սուր:

Չկար մայրս ծեր, մեռել եր վաղուց,  
Անծածկ խրճիթում քամին եր խաղում:

Չկար տան գիմաց իմ բարդին արդեն,  
Արաղիլը մեր և բունը հարդե:

Չկար թխածամ աղջիկն աննման,  
Տարել եր նրան մի ծեր ատաման:

Ել ո՞ւր գտնեյի յես նրան, ախ ո՞ւր,  
Լուռ հեծա նորից, հեռացանք տխուր:

Հեռացանք տխուր, հեռացանք անդարձ  
Հեռվում թողեցինք տուն, գետ ու անտառ:

Բայց վերքս՝ վախվեց, լավացավ անս ել,  
Հիմա յես ունեմ թե՛ տուն և թե՛ սեր:

Իմ տո՛ւնն ե մեր մեծ յերկիրը ժպտուն,  
Վորին տվեցի և՛ արյուն, և՛ տուն:

Իմ սերն է ահա այս ծովը անտակ,  
Ա՛խ, այն աչքերի նման կապուտակ:

Վոչ վոք իմ սիրուց ինձ ել չի պոկի,  
Յեւ տունս այս մեծ չեմ սա վոչ վոքի:

Հսկում եմ, ահա՛, յես վորպես պահակ,  
Ծոցումս ճերմակ մի փետուր պահած:

Հանում եմ, նայում մեկ-մեկ և խոկույն  
Հիշում եմ նրան, շորը գույնզգույն...

Հիշում եմ՝ ինչպես գետի մեջ վճիտ  
Յոլում եր խաղաղ մի փայտե խրճիթ...

— Ծովի յեզերքին, անթափանց միզում,  
Պահակն է քայլում ու հանգիստ յերզում:

33 թ.

---

## ԲԱՆԼԱԳ ԿԱՊՈՒՏԱԶՅԱ ՄԱՆԿԱՆ ՅԵՎ ԱՐԵՎԻ ՄԱՍԻՆ

Յերգում եմ յես, և թող դողան,  
Լացեն վշտից հասկ ու կակաչ.  
— Փոքր եր տղան, այն լավ տղան,  
Փոքր եր այնքա՛ն ու կապուտաչ:

Ուներ դանդո՛ւր, դանդուր մազեր,  
Փայտե փոքրիկ նժույզ ուներ.  
Սիրում եր նա խաղալ, վազել,  
Մինչև մթին տուն դար, քներ:

Նրա զընդուն, ջինջ ծիծաղից  
Տուղտերն ելին բացվում, ժպտում .  
Բայց այդ դարուն վոչ մի ծաղիկ  
Չբարձրացավ նըրանց արտում :

Չերգեցին այն կարմրաքիթ  
Վայրի բաղերն, ու ամալը մուրթ  
Իջավ ծածկեց գետ ու խրճիթ .  
Չբացվեցին դուռ, լուսամուտ :

Քամին յերգեց անասարսուռ,  
Մրրիկ յեղավ մի իրիկուն .  
Հայրն ել առավ հրացան ու սուր  
Ու դուրս յելավ տնից թաղուն :

Լուռ համբուրեց դռան շեմին  
Նա իր վորդուն, հետո արտում  
Հեծավ իր ձին—ինչպես քամին՝  
Սուրաց, կորավ յեղեղնուտում :

— Գնաց, — ասաց մայրը նրան, —  
Վոր քեզ բերի անուշ դարուն,  
Արև բերի քեզ հուրհուրան,  
Վոր լույս լինի մեր աշխարհում :

Նստեց տղան ճամբի քարին,  
Նայե՛ց, նայեց նա շարունակ, —  
Չեր յերևում ծանաղարհին  
Վո՛չ ձիավոր, վո՛չ արեգակ :  
Գոմած զգեմք ազգս, բնջի՛

Նիրհեց տղան, — արև տեսավ,  
Տեսավ ծաղիկ ու ծիածան :  
Յերկու տարի յերսողիկ  
Յեկան օւրախ, տխուր անցան :

Ու մոռացավ նա դեմքը հոր,  
Հայրն ել ձուրթեց արեգակին,  
Վոր պիտի դար, ծաղեք մի որ  
Նստած սեվուկի խոտ յգին :  
Այնոց միմե՛լ — մկա մրբմ —

Անցան որեր : Տայգաներից  
Հորից մի որ նամակ բերին,  
Գրել եր նա — «կվանք նորից,  
Մեր պետն ե մեծ լենին քեռին» :  
Ասումուրգա վն չոցցր սմբուխ

Նորից ձեռին մի փունջ կակաչ,  
Նստեց տղան, նայեց հեռու՛ն  
Միշտ սուրբեց իր հորը քոջ  
Յեվ արեվին — լենին քեռու՛ն :  
Անորդի յիղոցի բնջաման մ

Յեզ մի անգամ վորոտացին  
Արտերի մոտ ուումբ, թնդանոթ.  
Տեսով տղան իր հոր սև ձին,  
Հիշեց նըրա դեմքը ծանոթ:

Թուջում եր նա քառամբակ  
Իր ջոկատի գլուխն անցած,  
Յեզ թշնամին սրերի տակ  
Հասկի նման թափվում եր ցած:

Յատկեց տղան իր փունջն առած,  
Յելով իսկույն դեմի ծառին,  
Փունջը շարժեց, ուրախ ճչաց—  
— Կեցցե արև— Լենին քեռին:

Հանկարծ լավեց խուլ կրակոց...  
Փունջը ընկավ բարդենու մոտ,  
Ճչաց տղան, ընկավ ճյուղին,  
Վորպես դըրոջ մի արյունոտ:

Յերբ առաջին ձիերն հասան  
Արտում կանգնած կանաչ բարդուն,  
Իջավ հերոսն այն պարտիզան  
Ու ճանաչեց փոքրիկ վորդուն:

Ու յերբ նրան տվին հողին  
Արտասվեց գունդն իր դլխահակ,  
Հետո փոքրիկ մի թումբ թողին...  
Ծառն ել դարձավ պատվո պահակ:

Կանգնած է դեռ Կանաչ բարդին,  
Նրա գովում հանգչում է լուռ  
Պարտիզանի փոքրիկ վորդին...  
Խշչում է նա, պատմում տխուր,—

Թե հայրն ինչպես թողեց նրան,  
Վոր մեզ բերի անուշ դարուն,  
Արև բերի մեզ հուրհուրան,  
Վոր լույս բերի մեր աշխարհում:

Պատմում է նա միշտ հողմածեծ՝  
Մանուկներին ու կակաչին,  
Թե այն փոքրիկը վողջունեց  
Այդ արեվի շողն առաջին:

— Յերգում եմ յես, և թող դողան—  
Լացեն վշտից հասկ ու կակաչ.  
Փոքր եր տղան, այն լավ տղան,  
Փոքր եր այնքա՛ն ու կապուտաչ:

միրո՞ւ մի՞յա մազս գրե՛լ չմ  
յա՛նա՛սի՛ր դ՛ի մըմոք բխտառդ.՛  
... միրո՛ւյ գեւո՛ւյ վն յի՛ղցո՛ւի տու՛ն  
յա՛նա՛սս սխոտսս յանդար յ՛մ վոս՛մ

մի՛րդաց շամա՛յ ո՛ւր ձ ճամբա՛ր  
ուոյ ձ հուշքանձ հու՛իոք ազ՛մ  
... մի՛րդո՛ւի յի՛ղցո՛ւի յմարտո՛ւյա՛մ

**ԲԱԼԼՈՒ ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ**

մազս՛ քմրո՛ւյ սմաշմի՛ ծղւա՛ւ մի՛  
մոզայք շոմս ի՛ցե՛լ բմն զո՛ւի  
(Ալեքանդր Շարապովից)  
հո՛ւղցա՛մյա դմն ի՛ցե՛լ սլալ զո՛ւի

ճմճակրո՛ւ ուշիե ամ ձ հոտուա՛մ  
մի՛շարա՛յ ու մի՛ղցե՛մքումս՛

Բարձրիկ սոճիներն են խշշում գետի մոտ  
Խրված կուրզանի կուշտ հողում:

Կանաչ ափերով, ափերով այն քարոտ  
Ճերմակ մառախուղն է սողում:

Բարձրիկ սոճիներն անձրեվից պաշտպանում,  
Ծածկում են կուրզանը քամուց:

Պառկած են յերկու ընկերներ կուրզանում,  
Կլիճը և Յանը, — վաղու՛ց:

Պահակ են կանգնում տարիներն ու հոտում,  
Սրերը փոխվում են արագ...  
Կլիճն ընդհատակ էր անցել Պոլեսո՛ւմ  
Յանը զինվոր էր հասարակ:

— մի՛շայ դ՛ի հարո՛ւց բխտա՛մս ցցմայքի՛  
Ջվարթ էր Կլիճն ինչպես ամպը գարնան,  
Իսկ մյուսն էր դժկամ ու հյու:  
Դայլում էր Կլիճը վերջին էր ճամբան,  
Տանում էր այն մյուսն սպանելու:

Խարազնո՛ւց ինչո՛ւ ողորս մի՛ղցե՛մքի իմո՛ւր  
Լուսայգն էր վառվում ծառերի ճյուղերին,  
Իսկ գետը շողում էր հանդարտ,  
Յերբ լե՛հ զինվորները մինչ ափը բերին  
Բոլշեիկին այն մահապարտ:

ճմճակրո՛ւ մայի զգմն ուրծայ չալաղա՛մ  
Յերկինքը նետել էր հայացքն իր խաղալ  
Դաշտի ցողապատ խոտերին:  
Ջոկատը ուղղեց փամփուշտ, փակաղակ,  
Յե՛լ նույնն արեց Յանը լոխն:

մի՛կեղս սոճայք իմ մո՛ւշար քա մաճա՛ր  
Նա մեր Պոլեսից է, — խորհում էր նա լուռ:  
— Փորիք դե, — սերժանտը գոռաց:  
Հողից բարձրացավ մի ծանոթ կաթնարույր,  
Յե՛լ բահը ձեռքի մե՛ջ դողաց:

Իջան ճակատին գանգուրները խարտյաչ,  
Յեվ Յանն եր կանգնել մտալից,  
Նա ել ինձ նման հողազորժ ե չարքաչ,  
Նա ե'լ ե ինձ պես Պոլիսից:

Քրտինքը ճակատից ծորում եր բահին,—  
Կլիմը կանգնել եր հպարտ.  
Ձոկատն ըսպիտակ քարացել եր լոին,  
Յեվ Յանն ել կանգնած եր անթարթ:

Գետի յեղերքին ցուրտ քամի բարձրացավ.  
Սաղարթը խշշաց հողմահար:  
Ուռում շողացին տասներկու հրացան,  
Ու մեկը միայն իջավ վար:

Խարտյաչ գանգուրները յելան հողմածեծ,  
Ավաղը դարձավ արնաներկ.  
Արծվի պես հպարտ՝ պիրկ թևերը բացեց,  
Ընկավ նա դեպի արեվելք:

Դաժան այդ պահուն իսկ կարծես արեվին  
Հղում եր վողջույնն իր նա լուռ:  
Կարծես թե դեպի խնդությունը դալիք  
Նա իդձն իր բացեց իրբեվ դուռ:

— Մայրեք.— ու սերժանտը խնդաց բարձրաձայն,  
Ձեռնոցն իր ողի մեջ պահած:  
Ներքեվ թեքվեցին տասներկու հրացան,  
Ու մեկը միայն շողջողաց:

Յեվ խուլ տարածվեց կրակոցը հեռվում,  
Յեվ դետը տնքաց ահասատ:  
Գնդակը, ձեռնոցն այն թեթեվ քերելով,  
Խրվել եր սոճու բունը հաստ:

Քայլեց նա,— սերժանտը՝ մոռյլ,— ինչպես քար,  
Վատքի տակ ձեռնոցն եր ընկել:  
Քայլեց ու հանկարծ վորոտաց սոսկ մի բառ,  
Մի ցուրտ հրաման.— կրակե'լ:

Ուրիս պառկեցին ընկերները ջահել,  
Կլիմը և Յանը արի:  
Նրանց հիշատակը յես վառ եմ պահել—  
Ինչպես յերգն՝ գալիք որերի:

ճանաչել ինչ որ արարած է  
ճարացն տղիմաստն միջմիջովի ինչոքով  
բարոյսն միայն պիտի լինի

Եւ այնպէս ցրոյնապի բմիճարտոյ յայն իմի  
աստուծոյն բազմոյս ցամաք իմի  
խոյնոցն իմիմիջ միայն արարածն զիմարեմ  
աստուծոյն ցոյնոցն անոս ցմ իմիպի

**ԲԱՆ ԼԵՎ ՏԱՆՆԵՐԿՈՒ ՓԵՏՏԱՎԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Ռաֆայել Ալեքսանդրից)

Արթնացան զնից ու առած կացին  
Փայտահատները անտառ գնացին

Յոթ էյին նրանք,  
Տաս էյին նրանք,  
Տասներկու յեղան:

Կտրեցին ծառեր ձիւ, հսկայական,  
Տերերի ծառերն աղմուկով ընկան...  
Մթնում վորոտաց մի խուլ հրացան,  
Մեկը վայր ընկավ, տնքաց ցածրաձայն:

Յոթ էյին նրանք,  
Տաս էյին նրանք,  
Տասներկու դարձան:

Բայց յերեք ժամ անց բոցը սարն իվեր  
Լախում եր անտառ, սղոցարաններ.  
Ինչպէս լուսարաց, յերկնքում մթին  
Բայն եր շողչողում, տարածվում չորս դին...  
Բացվեցին դանդաղ, փակվեցին կրկին  
Բանտի յերկաթե դռներն ահագին:

Յոթ էյին նրանք,  
Տաս էյին նրանք,  
Տասներկու յեղան:

Յեւ որը հասավ. թողած բանտ, զնդան,  
Լույս աշխարհ յեկավ խուճըր փայտահատ.  
Բայցեցին հողնամ ու կիսակենդան,  
Յնցոտիններում, բայց կուռ ու հպարտ:  
Դիմեցին դեպի կոմկուսակցութուն,  
Յեւ կոչում և ուժ տվեցին նրան,  
Ու կացինները նրանց լավազույն  
Յեւ մշտահատու զենքերը դառան:

Յոթ էյին նրանք,  
Տաս էյին նրանք,  
Տասներկու յեղան:

Ց Ա Ն Կ

ԼԵՆԻՆ-ՍՏԱԼԻՆ

Եջ

1. Ղեկավարը . . . . .	7
2. Ձեռքը . . . . .	10
3. Խոսք առաջնորդին . . . . .	13
4. Հրատեչտ Գորիին . . . . .	16

ՌԱԶՄԻ ՅԵՐԳԵՐ

5. Հաղթական քայլերդ . . . . .	21
6. Հին զինվորի նամակը . . . . .	23
7. Կովի յերդ . . . . .	26
8. Չա՛րկ թմբուկ . . . . .	28
9. Ծովափնյա յերդ . . . . .	30
10. Թնդանոթներ . . . . .	32
11. Դեռ կգա . . . . .	34
12. Յերդ Յելիքս Չերժինսկու մասին . . . . .	35
13. Ըմբոստ նավաստին . . . . .	37
14. Նոյեմբերյան քամին . . . . .	40

15.	Սխալը . . . . .	44
16.	Խոհ . . . . .	47
17.	Ազատութեան արձանին . . . . .	48

**ԲԱՆԼԱԳՆԵՐ**

18.	Բալլադ պարտիզանի, նրա կնոջ և ձիու մասին	51
19.	Բալլադ տան մասին . . . . .	55
20.	Բալլադ կապուտաչյա մանկան և արևի մասին	61
21.	Բալլադ յերկու ընկերների մասին (Թարգմ.)	66
22.	Բալլադ տասներկու փայտահատների մասին (Թարգմ.) . . . . .	70

7	ըցախայմիք	1
01	ըցումք	2
11	միջոցմշակողա գում	5
01	միջոցի աշխատք	6

**ԳՅՈՒՄՆԵՐ**

19	բոլորաց մարտկերանք	6
22	գրանամ փղոսկիք միջ	8
02	բոլոր փիլոս	7
22	բոլորից փղոս	8
03	բոլոր աղմուկի	9
23	գնումներ	10
43	արտ քոթ	11
23	միտան արտադրող սղիք	12
33	միտան արտադրող	13
01	միտան արտադրող	14



Մատենադարանի Պատմության և Պատմագրության Գիտությունների Կենտրոնի Գրադարանի Գրքերի Կարգը

Պատմության և Պատմագրության Գիտությունների Կենտրոնի Գրադարանի Գրքերի Կարգը  
 Կարգը հաստատվել է 1988 թ. 12-րդ դեկտեմբերի 27-ի թիվ 100-Ն հրամանով:  
 Կարգը հաստատվել է 1988 թ. 12-րդ դեկտեմբերի 27-ի թիվ 100-Ն հրամանով:  
 Կարգը հաստատվել է 1988 թ. 12-րդ դեկտեմբերի 27-ի թիվ 100-Ն հրամանով:  
 Կարգը հաստատվել է 1988 թ. 12-րդ դեկտեմբերի 27-ի թիվ 100-Ն հրամանով:  
 Կարգը հաստատվել է 1988 թ. 12-րդ դեկտեմբերի 27-ի թիվ 100-Ն հրամանով:

Պատասխանատու խմբագիր՝ Ս. Կիրակոսյան  
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալբունյան  
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Գլխավոր լիազոր Ա.—3063. Հրատ. 4479

Պատվեր 134. Տիրաժ 3000

Թուղթ 72×105 Տպագր. 5 մամուլ

Մեկ մամուլում 25600 նիշ. Հեղինակ. 3,08մամ.

Հանձնված է արտադրության 5 փետրվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության 7 փետրվարի 1938 թ.

ԳԻՆԸ 2 ռ. 20 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0363361

78

56.602

ԳԻՅՐ 2 ԻՒ. 20 Կ.

ՏՄՐԵՆ ՎԱՍՈՒ  
БОЕВЫЕ ПЕСНИ  
Գիւղ Արմ. ՍՍՐ, Երեւան, 1937 Կ.